

## Հիշե՛ք՝ Medicare ծրագրի ապահովագրական պլանները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի

### Medicare ծրագրի համար կարևոր ամսաթվերը

#### Սեպտեմբեր և հոկտեմբեր՝ վերանայե՛ք և համեմատե՛ք

**Վերանայե՛ք Ձեր պլանը կարող է փոփոխվել:** Վերանայե՛ք Ձեր ապահովագրական պլանից ստացված բոլոր ծանուցումները հաջորդ տարվա համար նախատեսված փոփոխությունների մասին:

**Համեմատե՛ք** Այցելե՛ք Medicare.gov/plan-compare կայքը՝ գտնելու և համեմատելու պլաններ, որոնք համապատասխանում են Ձեր կարիքներին:

#### Հոկտեմբերի 15՝ մեկնարկում է ծրագրում ընդգրկվելու ազատ ժամանակաշրջանը

Սա տարվա այն ժամանակաշրջանն է, երբ Medicare ծրագրից օգտվող յուրաքանչյուր ոք կարող է փոփոխություններ կատարել հաջորդ տարվա՝ առողջության և դեղերի իրենց ծրագրերում:

**Որոշե՛ք** Հոկտեմբերի 15-ն առաջին օրն է, երբ Դուք կարող եք փոխել Ձեր Medicare-ի ապահովագրական ծածկույթը հաջորդ տարվա համար:

#### Դեկտեմբերի 7՝ ավարտվում է ծրագրում ընդգրկվելու ազատ ժամանակաշրջանը:

Ընդհանրապես դեկտեմբերի 7-ը վերջին օրն է, երբ Դուք կարող եք փոխել Ձեր Medicare-ի ապահովագրական ծածկույթը հաջորդ տարվա համար: Ձեր ընդգրկման հայտը ծրագիրը պետք է ստանա մինչև դեկտեմբերի 7-ը:

#### Հունվարի 1՝ ապահովագրական ծածկույթն գործողության մեջ է մտնում:

Ձեր նոր ապահովագրական ծածկույթն գործողության մեջ է մտնում հունվարի 1-ից, եթե Դուք անցնում եք նոր ապահովագրական պլանի: Եթե Դուք շարունակում եք նույն ապահովագրական պլանը, նոր տարվա համար ապահովագրական ծածկույթում, արտոնություններում կամ ծախսերի հետ կապված ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում հունվարի 1-ից:

#### Ձեր ապահովագրական ծածկույթում փոփոխություններ կատարելը հունվարի 1-ից հետո

Հունվարի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում, եթե Դուք օգտվում եք Medicare Advantage Plan-ից, կարող եք հրաժարվել Ձեր պլանից և անցնել մեկ այլ պլանի՝ Medicare Advantage՝ դեղորայքի փոխհատուցմամբ կամ առանց դրա, կամ Original Medicare: Եթե անցնեք Original Medicare-ի, Դուք նաև կունենաք Medicare դեղորայքային պլանին միանալու տարբերակը: Ձեր ապահովագրական ծածկույթը կսկսվի պլանի կողմից ձեր ցուցակագրման ձևը ստանալուց հետո հաջորդ ամսվա առաջին օրվանից: Որոշ դեպքերում Դուք կարող եք կատարել այլ փոփոխություններ, եթե Դուք իրավունք ունեք օգտվելու Ծրագրում ընդգրկվելու հատուկ ժամանակաշրջանից:

Medicare.gov

1-800-MEDICARE

(1-800-633-4227)

TTY 1-877-486-2048

Դուք իրավունք ունեք ստանալու Medicare-ի մասին տեղեկատվություն մատչելի ձևաչափով, օրինակ՝ մեծ տառերով տպված, Բռայլի այբուբենով կամ ձայնագրությամբ: Դուք նաև իրավունք ունեք բողոք ներկայացնելու, եթե կարծում եք, որ ձեր նկատմամբ խտրականություն է կիրառվել: Այցելե՛ք Medicare.gov/about-us/accessibility-nondiscrimination-notice կայքէջը կամ զանգահարե՛ք 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով լրացուցիչ տեղեկությունների համար: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով:

Այս ապրանքն արտադրվել է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին:

CENTERS FOR MEDICARE & MEDICAID SERVICES

CMS Product No. 11220-AR (Armenian)  
Revised August 2022



Դուք կատարե՛լ եք  
Medicare-ի Ձեր  
ապահովագրական  
պլանի  
ամենամյա  
վերանայումը:

Medicare ծրագրում  
ընդգրկվելու ազատ  
ժամանակաշրջանը՝

Հոկտեմբերի 15-ից  
դեկտեմբերի 7-ը



## Medicare-ն ավելի ուժեղ է, քան երբևէ ավելի շատ ընտրություններով, ավելի ցածր ծախսերով և Ձեզ անհրաժեշտ տեղեկատվությունը մատուցելու ավելի լավ եղանակներով:

Ամեն տարի կլինեն նոր առողջապահական պլանի և դեղորայքային ծածկույթի տարբերակներ: Ամեն աշուն ուսումնասիրեք Ձեր ներկա առողջապահական և դեղորայքային պլանները և հավաստիացե՛ք, որ Ձեր պլանը դեռևս բավարարում է Ձեզ:

Նաև հիշե՛ք, որ կարող եք օգտվել անվճար կանխարգելիչ նպաստներից, քաղցկեղի հետազոտումներից և տարեկան «բարեկեցության» այցելություններից: Ներբեռնե՛ք անվճար «ԻՆՆԷ Է Ներառված ծածկույթում» շարժական սարքի հավելվածը App Store-ից կամ Google Play-ից՝ ապահովագրական ծածկույթի վերաբերյալ տեղեկությունները անմիջապես Ձեր շարժական սարքի վրա ստանալու համար:



## Արդյո՞ք իմ ապահովագրական պլանը բավարարում է ինձ:

[Medicare.gov/plan-compare](https://www.medicare.gov/plan-compare) այցելելը ավելի քան երբևէ հեշտացնում է ծածկույթների տարբերակների համեմատումը և պլանների միջև ընտրություն կատարելը: **Հնարավոր է, որ դուք ձեր տարածքում գտնեք պլաններ, որոնք՝**

- ✓ Լինել ավելի մատչելի
- ✓ Ապահովագրեք Ձեր դեղատոմսով դուրս գրվող դեղերը
- ✓ Հնարավորություն տալ Ձեզ օգտվելու Ձեր նախընտրած ծառայություն մատուցողի, ինչպես օրինակ՝ բժշկի ծառայություններից կամ դեղատնից:
- ✓ Առաջարկում են լրացուցիչ նպաստներ, որոնք չի ֆինանսավորում Original Medicare-ը, ինչպիսիք են տեսողության, լսողության հետ կապված, ատամնաբուժական և այլ ծառայությունների ֆինանսավորումը:

## Դուք նաև կարող եք՝

- ✓ Ստանալ գրպանից վճարվող ծախսերի նախահաշվարկը
- ✓ Որակի և հաճախորդների սպասարկման գնահատականները ապահովագրական պլանի ներկայիս անդամներից

Եթե ցանկանում եք փոխել ապահովագրական պլանները, զանգահարե՛ք այն ապահովագրական պլանի գրասենյակ, որի ծառայություններից ցանկանում եք օգտվել: Medicare-ը կարող է նաև օգնել Ձեզ միանալ՝ առցանց, անձամբ կամ հեռախոսով: **Եթե Դուք գտնում եք, որ Ձեր ներկայիս ապահովագրական ծածկույթի Դուք գոհ եք Ձեր ընթացիկ ծածկույթից և կարծում եք, որ այն կբավարարի Ձեր կարիքները հաջորդ տարվա համար, ապա Ձեզ ոչինչ պետք չէ անել:**

**Հիշե՛ք՝** Medicare ծրագրում ընդգրկվելու ազատ ժամանակաշրջանում Դուք կարող եք որոշել շարունակել Medicare ծրագրի հիմնական բաղադրիչը կամ գրանցվել Medicare-ի արտոնյալ ապահովագրական պլանում: Եթե Դուք արդեն գրանցված եք Medicare-ի արտոնյալ ապահովագրական պլանում, Դուք կարող եք օգտվել Ազատ ժամանակաշրջանից և վերագրանցվել Medicare ծրագրի հիմնական բաղադրիչում:

## Ձեզ անհրաժեշտ օգնությունն ստանալու 4 ուղի:

1. **Այցելե՛ք [Medicare.gov/plan-compare](https://www.medicare.gov/plan-compare)**՝ ապահովագրական ծածկույթի տարբերակներին ծանոթանալու և համեմատելու և առողջության և դեղատոմսով տրվող դեղերի պլաններ գտնելու համար:
2. **Աչքի անցկացրե՛ք Ձեր «Medicare-ը և Դուք» ձեռնարկի ամենավերջին ձեռնարկը՝** Ձեր տարածքում առկա ապահովագրական պլանների ցանկը գտնելու համար: Վերանայե՛ք ցանկացած տեղեկություն, որ ստանում եք Ձեր գործող ապահովագրական պլանից՝ ներառյալ «Փոփոխության մասին ամենամյա ծանուցում» նամակը:
3. **Զանգահարե՛ք 1-800-MEDICARE (1-800-633-4227): TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով:** Ձեր տարածքում առկա պլանների ցանկը տեսնելու համար: Կարդացե՛ք որևէ տեղեկություններ, որոնք ստանում եք Ձեր ներկայիս պլանից՝ ներառյալ «Փոփոխությունների մասին ամենամյա ծանուցման» նամակը:
4. **Զանգահարե՛ք Առողջության ապահովագրության հարցում աջակցության Ձեր նահանգային ծրագրի (SHIP) ներկայացուցիչներին՝** առողջության ապահովագրության վերաբերյալ անվճար, անհատական խորհրդատվություն ստանալու համար: Այցելե՛ք [shiphelp.org](https://www.shiphelp.org) կամ զանգահարե՛ք 1-800-MEDICARE՝ Ձեր նահանգի հեռախոսահամարը ստանալու համար:

## Ինչպե՞ս եմ ես օգնում վճարել Medicare դեղորայքային ծածկույթի համար:

Եթե օգնության կարիք ունեք Ձեր Medicare-ի հավելվածները և այլ ծախսերը վճարելու համար, Այցելե՛ք [Medicare.gov](https://www.medicare.gov) իմանալու Medicare Խնայողական ծրագրերի և այլ ծրագրերի մասին, որոնք կարող են օգնել Ձեզ ինչպես:

Եթե Դուք ունեք սահմանափակ եկամուտ և միջոցներ, Դուք կարող եք իրավունք ունենալ օգտվելու «Հավելյալ օգնությունից»՝ դեղատոմսով դուրս գրվող դեղերի հետ կապված ձեր ծախսերը վճարելու համար: Այցելե՛ք [ssa.gov/i1020](https://www.ssa.gov/i1020) առցանց դիմում ներկայացնելու համար: Սոցիալական ապահովություն 1-800-772-1213 հեռախոսահամարով: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-800-325-0778 հեռախոսահամարով: